

Ս. ՏԵՂԵԱՅ ԴԻԻԱՆԷՆ

Քաղաւած՝ զանազան պատահարներու մասին, Ս. Տեղեւոյ մէջ, որոնք կը պատկանին Յոյն, Լատին եւ Հայ խոյր եկեղեցիներուն:

ԼԱՏԻՆԱՅ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Կիրակի, Դեկտ. 24ի կէսօրին, Լատինաց Բեթղեմէ մուտքին, երբ Հայոց եւ Յունաց ներկայացուցիչները միասին կեցած էին Բեթղեմէի Տաճարի արտաքին երկաթեայ դրան մուտքին, տեսան, որ մարդիկ կը նային տանիք: Մեր ներկայացուցիչները հետաքրքրուեցան եւ դիտեցին որ կարգ չմը լատին ֆրանչիսկեան Միաբաններ եւ աշակերտներ կեցած կը դիտէին մուտքի արտաքին երկաթ դրան տանիքին բարձունքէն: Եկեղեցականներու թիւն էր մօտ հինգ եւ նոյնքան աշակերտներ:

Հայոց ներկայացուցիչը անմիջապէս բողոքեց Ս. Տեղեւոյ պատասխանատու Ոստիկանապետին, դիտել տալով որ Լատին Միաբաններ իրաւունք չունին դրան տանիքը գործածելու թափօրի մուտքի ժամանակ:

Նկատելով որ Ոստիկանապետը ի վիճակի չէր անմիջական կարգադրութիւն մը ընելու, Հայոց Վանքէն վարդապետ մը եւ քահանայ մը բարձրացան նոյն տանիքին վրայ, որովհետեւ յիշեալ տանիքը կը պատկանի Հայոց եւ Լատինաց միասնաբար:

Յոյն Միաբաններուն հակազդեցութիւնը եղաւ աւելի բուռն: Թարգման Վարդապետը եւ Յոյն Միաբաններ բարձրացան սինագագող եկեղեցւոյ տանիքը, որը աւելի բարձր է խնդրոյ առարկայ դրան տանիքէն, եւ սկսան նախատել Լատին վարդապետները եւ պարապ շիշեր նետել անոնց վրայ:

Այս անախորժ պատահարի ընթացքին, Լատինաց թափօր մուտք գործած էր Բեթղեմէի Եկեղեցին, ինչ որ վերջ մը դրաւ միջադէպին եւ ստիպեց երկու կողմերու Միաբանները որ բաշտին:

ուսմանական առաջնակարգ դպրոցներու կողմէ:

Անառեանի վերոյիշեալ գիրքը լոյս տեսած է 1955ին, բայց հոն յայտնուած գաղափարները մեզի կը տանին մինչեւ 1920ական թուականները: Հոգչ. Հայրսուրբը թերեւ տեղեկակ չէ վերոյիշեալ ականաւոր լեզուաբաններու գործերուն եւ իրենց գաղափարներուն, եւ թերեւ անոր համար է որ իր գրախօսականին մէջ բնաւ չէ անդրադարձած մեր ըրած քննադատութիւններուն, հետեւելով վերոյիշեալ լեզուաբաններու տեսութիւններուն: Եղած են ամփոփումներ մեր գրքին մէջ, մեծանուն հեղինակին յիշեալ գործը ժողովուրդի լայն զանգուածներուն մատչելի դարձնելու աւագ մտահոգութենէն առաջնորդուած միայն: Բայց

մինչոյն ատեն կան նաեւ վիրլուծական եւ քննական հատուածներ: Հոգչ. Հայրսուրբը միայն ամփոփում բառին վրայ է որ ծանաբացած է, անտեսելով մեր ինքնատիպ քննադատութիւնները Անառեանի տեսակէտներուն նկատմամբ, որոնց էջերը կարելի չէ եղած գտնել ճշիւ քննադատական հատորին մէջ եւ ուստի չէ յիշած. թերեւ այդ մասը ձգած է լեզուաբանի մը քննադատութեան, զայն նկատելով զուտ մասնագիտական հարց մը, վեր իր կարողութենէն: Կը յուսանք թէ այսօրուայ բաւական է Հոգչ. Հայրսուրբը մասնաւորապէս եւ ընթերցասէր հասարակութիւնը ընդհանրապէս լուսաբանելու:

ԱՆՈՒՇՍԻԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

Երեք օր հոտք, 27 Դեկտ. 1961 թուականի որոշումով, Երուսաղէմի եւ Ս. Տեղեաց Կառավարիչը տեղեկացուց յարանուանութեանց թէ որոշած է արգիլել ոեւէ հկեղեցականի բարձրանալը Ս. Ծննդեան Եկեղեցւոյ արտաքին դրան տանիքին վրայ, Ծննդեան տօներու պաշտօնական մուտքի առիթով, եւ թէ, առաջը առնելու համար անախորժ պատահարներու, ոստիկաններ պիտի կենան այդ տեղը:

Հարցը խնդրոյ առարկայ եղաւ Երուսաղէմի եւ Ս. Տեղեաց Կառավարիչին մօտ, ժողովի մը ընթացքին, գումարուած Յոյն, Հայ, Լատին յարանուանութիւններու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ, Դեկտեմբերի 30ին, որու ընթացքին Ֆրանչիսկեան Հայրերը խնդրեցին որ ետ առնուի ոստիկաններ կեցնելու որոշումը եւ յանձն առին, իրենց կարգին, այլեւս մուտք չգործել տանիքին վրայ պաշտօնական թափօրներու առթիւ:

Այս ծեւով փակուած նկատուեցաւ հարց մը, որ, երկրորդ անգամ ըլլալով, գայթակղութեան պատճառ կ'ըլլար Լատինաց թափօրի մուտքին օրը ի Բեթղեհէմ:

Յունաց Պատրիարքը պատժական խիստ միջոցներով սաստեց այն Միաբանները՝ որոնք գտնուած էին անպատշաճ ընթացքի մէջ:

Լատիններ կատարեցին Ս. Ծննդեան գիշերային իրենց արարողութիւնը Ս. Այրին կից՝ իրենց եկեղեցիին մէջ, կանոնաւոր կերպով, առանց միջադէպի:

ՅՈՒՆԱՅ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Յունուարի 6ին, Յունաց Ամեն. Պատրիարքը, Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով մեկնեցան Երուսաղէմէն եւ պաշտօնական թափօրով մուտք գործեցին Բեթղեհէմ: Նոյն գիշեր, մինչեւ յաջորդ առաւօտ, Յոյներ կատարեցին իրենց պաշտամունքը կանոնաւոր կերպով, առանց ուշագրաւ միջադէպի:

Հայոց ներկայացուցիչը բողոքեց Ոստիկանապետին եւ Ս. Տեղեաց կանոնաւորութեան հսկող սպային միայն մէկ առիթով, երբ Յունաց երգչախումբի անդամները փոխանակ կենալու Ս. Այրի հարաւային Դուռքի աստիճաններուն վրայ, ուր կենալու արտօնութիւնը կը խնդրուի Պատրիարքարանէս, Ն. Վ. Երուսաղէմի Կառավարիչին կողմէ, եղած յատուկ կարգադրութեան մը համաձայն, կեցած էին նաեւ սալայատակին վրայ:

Հայոց Պատրիարքարանը այս մասին գրաւոր բողոք ներկայացուց Ն. Վսեմ. Կառավարիչին, եւ ընդունեց անոր որոշումը, հաղորդուած միեւնոյն ատեն Յունաց Պատրիարքարանին, որով կը հրահանգէր այսուհետեւ յարգել նախորդ տարիներու ընդունուած սովորութիւնը եւ թող չտալ որ Յոյն դպիրները աստ՝ ճաններէն աւելի բարձրանան:

Ուրախութեամբ կը հաստատենք նաեւ որ այս տարի չկրկնուեցաւ նախորդ տարուան միջադէպը Հայոց փառապանի տեղւոյն շուրջ, որով անխախտ պահուեցաւ աւանդութիւնը:

ՀԱՅՈՑ Ս. ԾՆՈՒՆԴԸ

Յունուարի 16ին, առաւօտեան ժամը 9.30ին, Ս. Պատրիարքը, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը եւ բարեպաշտ ժողովուրդը ուղղուեցան Երուսաղէմէն Բեթղեհէմ, պաշտօնական շքերթով:

Ճամբու ընթացքին թափօրը կանգ առաւ Ս. Եղիա վանքին մօտ, տան մը մէջ՝ ուր հաւաքուած էին Բեթղեհէմի եւ շրջակայ գիւղերու ներկայացուցիչները եւ Քաղաքապետարանի անդամները, բարի գալուստ մաղթելու համար Ս. Պատրիարքին եւ խնդրելու անոր օրհնութիւնը: Հիւրասիրութենէ եւ բարեմաղթութիւններու փոխանակումէ ետք, շրջակայ գիւղերէն եկած հեծեալներ շրջապատեցին Ս. Պատրիարքին ինքնաշարժը, եւ ինքնաշարժերու պատկառելի թափօրը ուղղուեցաւ դէպի Բեթղեհէմ: Գիւղի հրապարակը լեցուած էր խուռն բազմութեամբ մը: Իսկ Քաղաքապետարանին առջեւ կեցած էին Ն. Վսեմ. Քաղաքապետը, Զօրաց Հրամանատարը եւ Ոստիկանապետը: Ս. Պատրիարքը իջաւ իր ինքնաշարժէն եւ ողջունեց պաշտօնական անձնաւորութիւնները, մինչ Միաբանութիւնը եւ աշակերտութիւնը թափօր կազմած կը յառաջանային Տաճարին հրապարակը:



Ս. Պատրիարք, եղապատուած Բեթղեհէմի եւ եղակայից ներկայացուցիչներով, կը գլխաւորէ մուսֆի քափօրը:

Բեթղեհէմի Հայոց Վանքի Տեսուչ Վարդապետը յառաջացաւ դէպի Ս. Պատրիարքը եւ օրհնել տուաւ աւանդական աղն ու հացը: Խնկաման եւ ծաղկի ջուրի որուակ ի ձեռին՝ բարի գալուստ մաղթեց Ս. Պատրիարքին:

«Խորհուրդ մեծ» շարականը երգելով թափօրը յառաջացաւ դէպի Տաճարին արտաքին մուտքը:

Ն. Վ. Բեթղեհէմի, Պէյթ Ճալայի եւ Պէյթ Սահուրի Քաղաքապետները, իրենց հետեւորդներով, ներկայացան Ս. Պատրիարքին Հայոց Վանքի դարչիհին մէջ եւ բարի գալուստի ջերմ մառերով ողջունեցին Նորին Ամենապատուութիւնն ու Միաբանութիւնը:

Նոյն իրիկուն, Ս. Պատրիարքը ճաշի հրաւիրեց Բեթղեմիի եւ շրջականերու հարիւրէ աւելի ներկայացուցիչները, որոնք ուզեցին մասնակցիլ տօնական մեր ուրախութեան:

Իսկ կէսօրէ ետք կատարուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ ծրագալոյցի արարողութիւն, Մենդեան Տաճարի հայկական բաժնին մէջ, եւ մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Ս. Ալբին մէջ:

Երբ արարողութեան կարգը հասաւ «Հարց»ի երգեցողութեան, Ս. Պատրիարքը թափօրով առաջնորդուեցաւ Ս. Այր, ուր կը ցուցուի Ս. Մսուրը, եւ, ի ներկայութեան



Մենդեան Ս. Ալբին մէջ, արարողութեան պահուն: Դիմացը կ'երեւին Բեթղեմիի Քաղաքացիներ, Նուսապի մի Ընդհ. Ոստիկանացիներ եւ պետական ներկայացուցիչներ:

Երուսաղէմի Կառավարիչին, Երուսաղէմի Ընդհ. Ոստիկանապետին, Քաղաքապետներուն եւ Անգլիոյ Ընդհ. Հիւպատոսին, շարունակուեցաւ արարողութիւնը մինչեւ Ս. Պատարագ:

Գիշերային պաշտամունքը ծայրասփոռուեցաւ, ըստ սովորականին, Երուսաղէմի եւ Ամմանի ռատիօկայաններէն: Ջայնասփոռուեցաւ միաժամանակ Ս. Պատրիարքին Մենդեան պատգամը:

Առաւօտեան մօտ մատուցուեցաւ երկրորդ Ս. Պատարագը եւ կատարուեցաւ Մկրտութեան կարգը, Հայոց պատկանող թեւին մէջ, Ս. Ալբի մուտքին:

